

Թէպէտե ասպետականութեան մէջ կան այնպիսի պակասութիւնները որոնք  
մեղ համար ծիծաղական են, և զլիառոր պակասութիւնը արհամարհանքն  
էր գէպի աղնիւ խաղաղ աշխատութիւն և մտաւորական կրթութիւնը ու  
կայն ոչ միայն միջնադրեան ազգերը, ոյլ նոյնինքն մենք նորանից շատ բան  
ունինք առած: Կօշտութեան և բարբարոսութեան միջացում, մաքուր բա-  
րոյականութիւն քարոզելով ասպետեցին բարյականութեան,  
աղնուութեան: արգարակատութեան: մարդուիրութեան սկզբունքի տա-  
րածվելուն: Բարձրացնելով կինը և տալով նորան իրաւունք կեանքի մէջ,  
աղնուացրին և բարձրացրին ընտանեկան կեանքը և վերջապէս ասպետա-  
կանութիւնը բոլորովին բանաստեղծական երևոյթ լինելով: բարերար ազ-  
գեցութիւն ունեցաւ բանաստեղծութեան և գրականութեան զարգացման  
վերայ միջին գարերում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԸՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, (Արարատ, Է 5):

Հայկական ծննդարանութեան առաջին անձն Հոյէ, սկզբում մի ցեղի,  
իսկ վերջը բոլոր Հայերի վիպանուն դարձածը, հայկական ազգի անձնաւո-  
րումն է, որը մինչև այսօր ևս Հայ կանուանի:

Տարեգիրը կամէ: «Ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բէլայ» յետ  
ծնանելոյ զորդի եւր զԱրմենակ ի բաբելոնէ, չու արարեալ գնայ յերկիրն  
Արարադայ, որ է ի կողման հիւսիսոյ: Ինչպէս մտաւ արդեօք այստեղ  
Բարելոն: Պատահմամբ արգենք ժողովողի ձեռով, թէ արդարե կար նա  
աւանդութիւնների մէջ: Մենք աւելի համաձայն ենք վերջինս ընդունելու,  
նկատելով նորա մէջ արդարե պատմուկան փաստի նշմարանք:

Հին Ասորեստանի արձանագրութիւններն Հայաստանի բնակիչներին ս--  
րբառ կանուանեն: Բայց շատ անգամ փոխանակ այս անունի գործ կածվի  
միւսը, որը Ա.Ի.Ռէ կեարգացվի (տես Սարգ. արձանագ. I, 21). Միւնոյն  
արձանագրութիւնների մէջ այս Ա.Ի.Ռէ անունով կանուանվին Բարելոնի  
հին բնակիչները, որոնք Սեմական չեն: Արդէն արձանագրութիւնների մէջ  
այս անունի նոյնութիւնից կիմացվի Հայաստանի հարաւային մասի բնա-  
կիչների հին Բարելացինների հետ ունեցած ազգակցութիւնը: Եթէ մենք  
այս անունը փոխանակենք Քաղցէացիններին ծանօթ մի ուրիշ անունով,  
այն ժամանակը միւնոյն եղանակացութեան կգանք: Ցայտոնի է, որ Քսէնօ-  
ֆօնտ (Անա. IV, 3: V, 5) իւր Ճանապարհորդութեան միջոցին կհանդիպի  
Քաղցէացիններին հարաւ — Հայկական կամ Քարգելեան սարերում: Իսկ  
թէ Քաղցէացինները Բարելոնի հին բնակիչներ էին, կարեսրութիւն չկայ  
խօսելու՝): Այսպէսով մենք կտեսնենք, որ Միջազնորի սահմաններում և

1) Աւելի հանգամանօրէն քննված է այս հարցը Essai de Commentaire des frag-  
ments cosmogoniques de Beroe par Fr. Lenormant, Paris, 1872<sup>րդ</sup>, 48—55.

և նորա հարաւային մասերում կրնակէին միենոյն ժամանակ միենոյն ցեղի երկու ծիւզ կրելով միենոյն անունը, և որ զիսաւորն է, նոքա կխոստովանէին այս ազգակցութիւնը, Մենք կկարծենք, որ հարաւային Հայերի (Ուրարտա) Բարելացիների հետ ունեցած այս ազգակցութեամբ կրացտարվի այն հանգամանքը, որի մասին Դարեհ կխօսէ իւր բխութունեան արձանագրութեան մէջ (Bh. III, 75—81, Spieg.<sup>1</sup>) այսինքն Հայերի ապստամբութիւնը Բարելոնում, « Դարեհ թագաւորը կասէ, ոյն ժամանակ երբ ես Պարսկաստանում և Մարաստանում էի, Բարելացիներ երկրորդ անգամ ոտի ելան ինձ զէմ։ Հանդիտի որդի Արտաշ անունով մի Հայ<sup>2</sup>՝ ապստամբեց ինձ զէմ։ Բարելոնում Դուրանա<sup>3</sup>՝ անունով տեղ կայ, որտեղ նա ապստամբեց։ Նա կստէր ու կասէր. « Ես Նարուկուզրասարի որդի Նաբունիդա եմ։ Այն ժամանակ Բարելոնի բոլոր բնակիչները ինձնից հեռացան և անցան այս Արակաի կողմը։ Նա նուածեց Բարելոնը և զարձաւ նորա թագաւոր »<sup>4</sup>։

Հայի ձեռով Բարելոնը աղմկելու փաստը հասկանալի կլինի, երբ որ Հայ բառի տեղ գնենք նշյանիշ Արտաշ բառը, այսինքն, Արարագ երկրի բնակիչը, հետէսային քաղաքացին, Բարելացիներին, հարաւային + պատմական բնագրի մէջ ինանգարված է. Նորա միտքը կարելի է միայն լիովին վերականգնել նորիսի թարգմանած մարասկիւթական բնագրով<sup>5</sup>). « Դարեհ թագաւորը կասէ. այն ժամանակը ես զօրք ուղարկեցի Բարելոն իմ ծառայ մարաստանցի Արականացի առաջնորդութեամբ, որին ես ասացի. գնացէք և կոտորեցէք Բարելոնում այն զօրքը, որը ինձ չէ կամենում հնազանդել. Այն

2) Արքանագրութեան բնագրով տես Դ. Կառավարիչի — Inscriptiones Palaeo-persicae Achaemenidarum, Petrop. 1872, եր. 35—36 Inscript. Behistani III, 13—14.

3) Պարսկական բնագրում Arminiya, տարեստանէկանին մէջ (Schrader, Die assyrisch-babylonischen Keilinschriften, ZDNG մէջ. 1872, հ. XXVI, 5. 355) Uraasta=Urasta=Urarta:

4) Հանդիտա. Դուրանա բաւերի փոխանակ Մենադի մէջ (Les Achémenides et les inscriptions de la Perse, Paris, 1872 եր. 118) Haldita եւ Dubala է.

5) 1879 թ. Արարատի յուլիս եւ օգոստոս ամսատետրակներում հրատարակեցինք Բիսութունի բեւեռագիր արձանագրութիւնների նոր թարգմանութիւնը ալ. Գօրօյեանի ձեռով, Թավթիզից. Այս նոր թարգմանութեան մէջ անունների ընթերցանութիւնը տարբեր է, եւ այս է ահա. « Դարեհ թագաւորն կասէ. երբ Պարս եւ Մարաստան էի, Բարելացիներն կրկին անգամ ինձնից ապստամեցան. Նընտիթաի որդի Էրկըհա (կամ Էրդհա) անունով Հայ մի, Բարելոնի Տէհվաեանա գաւառից վեր ելաւ եւ սուտ այսպէս ասաց—Ես Նապունիթաի որդի Նապուի Էտրէսէրան եմ. Յետոյ Բարելոն երկիրն ինձնից ապստամեցաւ եւ Էրդհաի կողմն անցաւ եւ նա Բարելոնն առաւ եւ Բարելոնի թագաւորն եղաւ » (Արարատ, 1879 օգոստոս, եր. 341). իմբ.

6) Journal of R. Asiatic. society.

ժամանակ Ահինդաֆրան գնաց զօրքով Բաբելոն։ Ահինդաֆրան Առւրամազ-  
պայի օգնութեամբ և ողորմութեամբ առաւ Բաբելոն Մարկազան ամօնի  
Զին։ Այս ժամանակը Արակաւ որ կոսէր թէ «Ես Նարուգողրոսոր եմ»  
իւր զլառաւոր կուսակիցների հետ բանվեցաւ։ Ըղթաներով կապած նոցա  
բերին ինձ մօտ ես Հրամայեցի խաչել Արակային և նորա համախօնչներին  
Բաբելոնում։» Բաբելացիների սէրը զէսի անկախութիւն յայտնի է ամեն-  
քին որոնք զիտած են նոցա պատմութիւնը վերջին ժամանակում գտնված  
բռն բնագիրների համաձայն<sup>7)</sup>։ Ասորեստանի շրջանի ընթացքում նոքա  
տասնական անգամներ տպատամրել են Ասորեստանի զէմ։ և միայն ոյժին  
հնագանդելով, ճանաշեցին իւրեանց վերայ նորա զլիաւորութիւնը։ Եթէ  
որ Բաբելացիներ յօժարութեամբ համաձայնեցան ընդունել Արակային  
իւրեանց թագաւորու ուրեմն կարծիք չկայ, որ նոքա Քաղղէացի կհամարէին  
նորան։ Այդպիսի փաստ հիմնված լինելով կողմակի հանգամանքների վե-  
րայ ծանրակշիւ նշանակութիւն կոտանայ Ուրարտաի Բաբելոնի քաղղէացի-  
ների հետ ունեցած ազգակցութեան խնդրի մէջ։ Մենք չենք կամենում  
վճռել այն հարցը, թէ հիւսիսում բնակած Քաղղէացիների մի մասը հա-  
րաւից ե՞ն եկած, կամ թէ ընդհակառակն, Քաղղէացիները հիւսիսից զէ-  
սի հարաւ գալով, հիմնած են Բաբելոն։ Թէ ոյս և թէ միւս կարծիքը  
իւրեանց կողմակիցներ ունին։ Մեզ համար նշանաւոր է այն փաստը,  
որ Միջազնետքի հիւսիսային կողմը և նորա հորաւային մասերում կընա-  
կէին միւնոյն ազգի երկու ճիւղ։ Եթէ աւանդութիւնը հին Բաբելացիների  
Արարտ սարերի բնակիչների այս համացեղութիւն մատքերելով, ոյդ ար-  
աւայայտած է Հայկին Բաբելոնից զէսի Արարտ սարերը գաղթելու փաս-  
տով։ ուրեմն նա վարդած է, ինչպէս որ պիտի վարդէր ժողովրդական ա-  
ւանդութիւնը այսինքն իւր ճեսվ իմաստ և տուել փաստին և նորա  
պատճառին։

Չնայելով, որ ասորելանութիւնը զարմանալի յառաջաղիմութիւններ  
արաւ վերջին ժամանակում այնու ամենայնիւ մենք զեռ ևս շատ հեռու ենք  
նորանից, որ կարողանանք ճիշդ և աներկբայութեամբ կարդալ իդէօզրամ-  
մեր, մանաւանդ եթէ սօքա յատուկ անունների մէջ կալատաչին։ Եթէ  
ընթերցողը մտարերէ այն, ինչ որ մենք ասացինք իդէօզրամների մասին  
առաջին զլթումն այն ժամանակը շատ հեշտութեամբ կարող է հասկանալ—  
թէ որքան բաղմատեսոկ կորող է լինել միւնոյն յատուկ անունի ընթեր-  
ցումն Քալով աշխարհապրական և տոհմագրական անուններին, ոոցա  
զժուարութիւն ևս առաւել կուելանայ։ Խուզարկող շատ անգամ միւնոյն  
աեղին և ազգին վերաբերված երեք, չորս և աւելի անուններ կզտնէ։ Ար-

7) M. Jénant, Annales des Rois d'Assyrie, Paris, 1874, n<sup>o</sup>. 53. Տես նոյնակէս  
Fr. Lenormant, les premières civilisations, 4. II. n<sup>o</sup>. 1874. Un patriote babylonien  
du VIII siècle avant notre ère n<sup>o</sup>. 203—309.

գեօք Ասորեստանցիներն այս զեպքում է նկատի ռւնեին միևնոյն երկրի մասեր, կամ թէ միևնոյն ազդի զրեր, որոնց զանազան անուններ էին տալիս, —անյայտ է: Դժուարութիւնը կաւելացնէ այն հանգամանքն ես, թէ Ք՞նչղէս կարգալու է անունը տառերի թէ ձայների (առողանութեան) հիմամբ, ասորեստանեկան թէ ակկազի լեզուով: Հետզիետէ ծանօթանալով առարկայի հետ, այս դժուարութիւնները փոքր առ փոքր կանչետանան, իսկ աւելի քիւ ծանօթ երկրի և ազդի վերաբերմամբ նոքա գեռ ևս նոյնութեամբ կմնան: Կպատահին աշխարհազրական և տոհմազրական խօսքերի հարիւրաւոր անուններ նոյն երկրին վերաբերմամբ, որը ի վերջոյ Հայաստան անուանեցաւ, սակայն մինչև այժմն հնար չեղաւ բաւական ճշգութեամբ որոշել նոցա տեղը, Խնչերիցէ, հարաւային Հայաստան և նորաբնակիչներ նշանակելու համար կան մի քանի խօսքեր, որոնց մերձաւոր նշանակութիւնը մեզ անյայտ է: Մենք արգեն տեսանք Ռւրարտա և Ակկազի խօսքերը, որոնք կհամապատասխանեն Արարագին և Քաղղէացիներին, բայց մենք դեռ ևս բոլորովին չհետազօտեցինք: Ակկազի բառը ըստ արտարերութեան կարելի է կարգալ բարբար, և մենք չենք իմանում այսպէս կարտասանվէր նա թէ չէ: Սարգոսի և ուրիշ արձանազրութիւնների մեջ կդժուվի ընդարձակ նահանգի անունը, որ գրեթէ նոյն նշանակութիւն ունի ինչ որ Արարտ: Այն սարերը, որոնց վերայ կանգնեցաւ նոյն տապանը ջրհեղեղի մասին եղած վիտասանութեան համաձայն, կանուանվին աէցէ: Առքա այն սարերն են, որոնց մենք Արարադ անուանեցինք: Daniel Haigh<sup>8)</sup> սատր երկրների մի աղիւսակում (W. A. I. II, 50) կդանէ mat Gutium (ակկազիներէն) = mat Guti (ասորեստաներէն): Ցհառան Naksuanna ki = gutium է: Երկրորդ աղիւսակում (II, 48) Nachsuanna = Kuta: Աշխարհազրական համանունների աղիւսակում: mat Nižir = mat Guti: Այսպէսով Gutium, Nachsuanna, Nizir միևնոյն երկրի այսինքն Արարատի ակկազիական անուններն են (mat կնշանակէ երբէ), իսկ Guti և Kuta ասորեստաներէն են: Աւելի ևս կարելի է շատացնել մեզ հետաքրքրող տեղին վերաբերված անունների թիւը, բայց մենք սորանով կրաւականանք: Վալով ցեղերին, նոցա հարիւրներով կարելի է համարել: Մի տեղում Տիգլատ—Պիլլելատ Ա. կամէ, որ նա հալածել է նախէ<sup>9)</sup> երկրի 60 թագաւորներին: Իսկ այսպիսի օրինակներ շատ կան: Եթէ մենք անցնենք նոյն ինքն Ռւրարտու: այսի տհոնենք որ նոքա իւրեանց արձանազրութիւնների մեջ ոչ մի անգամ իւրեանց չեն անուանում այս անուններից ոչ մէկով: Նոցա մեջ մենք կդժունենք երկու խօսք միայն, երկրի թագաւոր Մարիր (Mairi) և երկրի թագաւոր Քիամիմա: Այս բազմատեսակ անունների թուին, որոնք միևնոյն տեղ և միևնոյն ժողովուրդ կնշանակեն, մենք կմիացնենք Հայ անունը ժո-

8) Zeitschr. der Aegypt. Sprache etc. 1874, Mai—Juni” եր. 71.

9) J. Ménant, les annales des Rois d' Assyrie, եր. 41.

զովրդի համար իսկ Կաղմառ անունը — նոյաց ցեղական նահանգի համար, որովհետեւ Հայ և Աւրարտա մինենոյն նշանակութիւն ունին:

Աւրեմն հին աւանդութիւնը կհաստատէ երկու փաստ: Թէ Հայեւ — Աւրարտ ցեղակից էին բարելոնեան Ակկարդիացիներից հետո և թէ այս Հայերը կապրէին Արարտառում Ասորեստանի հիւսիսային կողմը: Ասորեստանցիներից կամ թէ ուրիշ պատճառներից Ճնշված, Հայերը տարածվեցան զեպի հիւսիս: և շուտով Աւանի լը հրաշականեր մեծ տարածութեամբ ամեն կողմերից նոցա կալուածներ կդառնան: Նախին Հայերի մասին եղած յիշատակը մինչև յետին ժամանակ պահպանված է այս աեզում: Այսպէս Աւանից զեպի հարաւ — արևելակողմ՝ կդառնի Հայոց յու նահանգ: արևելակողմ — Հայկաբերդ: արևմտակողմ — Հայկաշեն:

Ասորեստանի կասէ: «Յետոյ տարեզիր կնկարագրէ Քէլի պատերազմ՝ Հայկի հետ որի մէջ Քէլը հալածերով Հայկին կմտնէ Ըրարագ»:

Յայտնի է, որ Քէլը բարձրագոյն չառատուածներից մին էր: որին Քարելոնում և Ասորեստանում կպաշտէին: Ասորեստանցիներ իւրեանց Քէլի ժողովուրդ կանուանէին: Դորա անունը կկանչվէր իսկոյն Ասսուրի անունից յետոյ<sup>10)</sup>: Դոյնպէս Հայերը իւրեանց Հայկի որդիներն կանուանեն: Աստղաբաշխութեան մէջ Հայկ Օրիոն համատեղութեան անուն է: Գուցէ այս անունը ի հնումն զիւցազնական նշանակութիւն ունէր Ասսուրի և Քէլի նման:

Կարգալով Ասորեստանի արձանադրութիւնների մէջ Ասորեստանցիների շարունակ Աւրարտա երկիր արշաւելու մասին, ակամայ կտեսնենք Քէլի Հայկի հետ ունեցած պատերազմի մասին յօրինած բանաստեղծի վիպատանական պատմութեան մէջ իսկական աւանդութիւնը, Քէլի ժողովրդի — Ասորեստանցիների, Հայկի որդիների — Հայերի հետ ունեցած անվերջ և զարկոր պատերազմի մասին: Այս աւանդութիւնը մինչև մեր ժամանակ ևս չանչետացաւ ժողովրդի բերանից: Այն տեղում, այսինքն Աւանի լը Շրջականերում Քէլուի բնակիչները իւրեանց զիւղը Քէլի թաղման տեղ կհամարեն: Փոքր ինչ աւելի հիւսիս — արևմտեան տիր վերայ կգտնվին Նիմրուդ արք (մասրելեցէք. Քէլ — Նիմրուլ) և կարդ կարդ խոշոր քարեր: Նոցա մասին բնակիչները կպատմեն թէ նոքա առաջ Նիմրուդ թագաւորի ուղարկեր են եղած, որ կկամենար աստուած լինել: բայց Ճշմարիտ Աստուածը ուղարկերին քար դարձրեց, իսկ ինքն Նիմրուդը գետին<sup>11)</sup> զլորվեցաւ, և այլն: Աւրեմն աւանդութեան այս մասն ևս պատմական հիմն ունի:

10) Sir G. Rawlinson, The five great Monarchies of the ancient eastern World. Second Edition, London 1871, II. tr. 12—14. Դոյնպէս նորա History of Herodotus. New Edition, London, 1862, vol. I. tr. 488—493.

11) Տեր Ներսէս Սարգսեանի, Մեծ եւ Փոքր Հայքի Հայերէն լեզուով գրած տեղագրութիւն, Վենետիկ, 1864, tr. 251—274:

Հայկի Բելի հետ ունեցած պատերազմին մասնակից կլինի Կաղմառը՝ որը ըստ Խորհնացուն Հայկի թոռն է, իսկ նախնական աւանդութիւնների մէջ, ըստ ամենայն հաւանականութեան, Հայկի որդի է, ևթէ մենք Հայկի որդիների ծննդաբանութեան վերայ հայեացք ձգենք, որը վերև յառաջ բերմքը պիտի տեսնենք, որ նորա մէջ գոնված բոլոր անուններն աշխարհադրական նշանակութիւն ունին Այսպէս, Խոր սաեղծված է Խորխոսունիք (Khar կհար ասորենատանեկան արձանագրութիւնների մէջ) նախարարութիւն բացատրելու համար։ Մանաւաղ — Մանաւաղնան նախարարութեան և Մանաղներու քաջարի համար որ մինչեւ ոյժմ ևս կայ Մելաղներդ ձեռվազ — Բզնունի նախարարութեան համար որից Աննի լճի հիւսիս — արեմտեան մասը Բզնունեաց ծով անուանվեցաւ։ Հայկը ըստ աւանդութեան բոլոր պատ նախարարութիւններ նուածած էր, Իսկ Հայկի կամ Հայժ ժողովրդի ցեղական հազիրն Արարատում առանձին անուն չունին։ Բայց սրավհետեւ նորա Կաղմոսի ձեռք ընկան, ուստի մենք իրաւոնք ունինք կարծելու, որ նորա կանուանվէին նոյնպէս Կաղմ կամ Աէզէմ։ Կաղմոս անունը իւր յունական վերջաւորութիւններն և պարզ սկզբական ծագմանը օտարաստի կերպի ուրիշ անունների մէջ։ Աէզէմ հրեարէն արեւելւ Կնշանակէ, իսկ Կաղմ յունական աւանդութիւնների մէջ Փիւնիկեցինների Յունատանում արած գաղթականութիւններ նշանակելու համար կղործածվի։ Այս երկու բացատրութիւն ևս նշանաւոր են մեզ համար միայն կողմանկի կերպով։ Խնդիրն այն է, որ Հայկի ցեղական կալուածներն Արարատում Կաղմոսին հասան, հետեւաբար Հայկի սկզբանական նահանդը Ասորեստանի հիւսիսային կողմում ոյցպէս կանուանվէր։

Կաղմոսի իշխանութիւնը (Կաղմառ) կար այսահել երկար ժամանակ և Խորենացու մէջ նորա մասին բազմիցս կյիշվի։ Երբ գործը կվերաբերվի Ասորեստանի մերձաւոր երկիրներին, Այսպէս Խորենացին կպատե Ա. գրքի Փ. գլխում։ թէ Արամ առնելով Ասորեստանցիններից մի քանի նահանդներ առւաւ նացա Կաղմեան տան իշխաններին։ Նորա մէջ Կաղմեան իշխանները աւելի ուշ ևս կյիշվին։ պատմական զարում։ Վաղարշակի ժամանակ։ Սորանից յետոյ հասկանալի է, թէ ինչի տարկիքի վեհապետ է առ կաղմուն Հայկի նախական կալուածներուն (կրկնելով բանաստեղծի խօսքերը) նորան կմոռնէ Հայկի նախական կալուածներուն։ և չէ արձակում նորան հօր հետ հիւսիս դեպի Արասխ։ Կաղմոսը նորան հարկաւոր էր Հայտատանի հարաւում։ Կաղմեան նախարարութեան անունը բացատրելու համար։

Այսպէս, մենք պարզեցինք նախ։ Աստուածաշնչի Արարատ խօսքը, երկրորդ, այս լեռնոտ երկրում Ասորեստանից դեպի հիւսիս, Քիւրդերի սարերում նշանակեցինք Հայկի ցեղական նահանդը։ Կաղմոսի կամ Կաղմեան նախարարութիւնը և կամ նահանդը Մենք տէսանք նոյնպէս որ թէ Աստուածաշնչի և թէ հեծանուական աւանդութիւնների համաձայն, այս երկրի սարերի վերայ կանգնեց նոյի կամ Սիսուարի տապանը։ Այսպէս Արարատի սարերում ուստի Կաղմոսի նահանդում։ Աստուածաշնչի աշ-

իսարհատեսութեան համաձայն պէտքէ բազմանար մարդկային ցեղը և եթէ նա նշյն խսկ սկզբում գնաց Սէնաար, նա պիտի հիսոխից ուեռէ հուրա գնար:

Ծննդոց զրբէ ծնւ, զլիում մենք կարդանք: Եւ եղեւ ի խաղալն նոցա յարկելից: գտին զաշտ մի յերկիրն Սէնէար և բնակեցան անդ: Մեկնիչ ները<sup>12)</sup> զուր աշխատեցին բացատրելու այն հանգամանքը, թէ մարդիկ ջրհեղեղից յետոյ արեւէից Սէնաար զաշտ իջան: և ոչ թէ հրասիսից, ինչ պէս որ պէտք էր կարծել նայելով Արարատի զրութեանը: Քանն այն է, որ հրեարէն բնագրի մէջ միւնոյն խօսքը կարելի է հասկանալ երկու կերպով: արեւէից և Աեռէմց<sup>13)</sup>): որովհետեւ վերջին բառս կնշանակէ արեւէից Մենք կարծենք: որ ծննդոց զրբից առնված տեղը պէտքէ հասկանալ վերջին մորով: այսինքն, թէ մարդիկ Աեղեմից Սէնաար հովիտ իջան: որովհետեւ Կատեւ Աեռէմց տեղի հնում Աւանի լճից դեպի հիսոխ գանվելն աներկ- բայելի է:

Հայկը, կասէ տարեղիրը, Բարելոնի մէջ աշտարակ շինող հսկաներից մինն էր: Աեղուների խառնակութենից յետոյ նա կմողնէ Բարելոն և յետ գառնալու միջոցին այն Ճանապարհով կզանայ: ինչ Ճանապարհով որ գնաց մարդկութիւնը ջրհեղեղից յետոյ, այսինքն Սէնաարից Աեռէմց:

Այստեղ մենք կրաժանվինք Հայկից և նորա սերունդից: որը կմնայ Աւանի լճի շրջականերում, և կանցնենք հայկական ցեղի վիպանուն Արմենակին և նորա սերունդին: որը կրնակի Խրասխի վերայ նորա ակունքից սկսած: Այստեղ, մեր կարծիքով, կմողնէ տարեղիրը Հայկի և Հայերի մասին եղած աւանդութիւնների շրջանը և կանցնի Արմենակի և նորա սերունդի մասին եղած աւանդութիւնների շրջանին:

6) Արմենակ, Տարեղիրը նորան Հայկի օրդի կանուանէ: Բայց մենք դորա մասին արդէն խօսած ենք, թէ այս առասպեկտալ անձն: Հայկական ցեղի վիպանունը, նախնական աւանդութիւնների մէջ չէր կարօղ Հայկի հետ ազգակցութիւն ունենալ: և ազգակցութիւն կսկսէ այն ժամանակը: երբ երկու ցեղը մի ազգ զարձած նոցա աւանդութիւններն ևս արհեստական կերպով միացած էին: Եթէ մենք Հայերին տեսանք Հայաստանի հարաւում Քուրդականի սարերում Արմայի և Վանի լճի շրջականերում: Արմենաններն պատմութեան մէջ երեկու օրից բոլորովին ուրիշ տեղերում կներգործեն: Տարեղիրը կասէ: Արմենակը, չկամենալով մեալ հարաւում, կերթայ հիսոխ գետի Արագած սարը (Ալագեալ) և այնտեղ կրնակի իւր բռլը ընտանիքով:

Ահա այս տեղը, որ Արփաչայի և Գողչայ լճի մէջ է Երասխի երկու ափերով, բայց աւելի հիւսիսում քան թէ հարաւում: Արմենանների ցեղական երկիրն է: Այսարատ նահանգը, որը ամեն ժամանակ՝ Հայաստանի կեղրոն

12) Bochart, Phaleg, Lib. I, C. XIII.

13) Եբրայ մի Kedem, Բարդէ: Օնկելու հ' Kadmetta. Biblia Polygl

և սիրտ կհամարվէր։ Արմենակի Այրարատ նահանգ գաղթելու վայրկեանից աւանդութիւնների մէջ կտրվի հիւխային և չարաւային Հայաստանի մէջ եղած կազը։ Տարեգրի Խօսքերից կարելի է եզրակացնել, որ այստեղ ևս Արմենների գալուց առաջ եղած է մի ուրիշ թել, որը կլանել են նոքայն երկիրը բռնելուց յետոյ։

Մենք կդառնվինք այժմ՝ Արմենների տոհմական նահանգում ժողովրդական անունի վիպանուն գարձած Արմենակի հետ, ուստի մենք որէարէ ինկատի ունենանք նոցա բազմանալն, ցրուելն զանազան կողմերը և երկիրների նոււաճում աշխարհակալութեան միջոցով։ Դրաքանչիւր նոր տեղը, որ պիտի մտնէ նորակազմ՝ թագաւորութեան մէջ, կեղրոնական նահանգից իւր կախումն ունենալու շափով Արմենակի սերունդների ծննդաբանութիւն կազմելուն պիտի նպաստէ, Աւրիշ խօսքերով։ իւրաքանչիւր նոր անունը ծննդաբանական աղիւսակում կնշանակէ սկզբնական նահանգին միաւորած նոր տեղը։ Ակատելի է յայտնի մի երկոյթ, այն է որ նահապետի որդիներ կձեռքակալեն իւրեանց հայրենիքին մերձաւոր երկիրներ, և նոցա իւրեանց անունով կանուանեն։ Թոռներն ևս նոյնպէս կվարվին այն երկիրների հետ, որոնք հայրենիքից աւելի հեռու են ընկած այնպէս որ նահանգը, որքան աւելի հեռու կդառնվի ցեղի սկզբնական հայրենիքից, այնքան նորա ներկայացուցիչը, որ նորան իւր անուն է տուած, աւելի հեռաւոր ազգակցութեան մէջ կդառնվի նախածնողի հետ։ Եթէ երկու նահանգ կամ երկու քաղաք կարգով կդառնվին, այն ժամանակը ժողովրդական պատմութեան օրէնքների համաձայն, նոցա մէջ ընակած կամ նոցա շինած պիտի լինին երկու եղբայրները։

Արմենակի մասին մենք առ անձնապէս ոչինչ չենք իմանում տարեզրից, բացի նորանից, թէ նա, սարը իւր անունով Արագած անուանեց, որի մէջ մենք մի առանձին նմանութիւն չենք տեսնում։

Արմենակն իւր մահից առաջ իւր իշխանութիւնը իւր որդուն (9) Արամայիսին կտայ, որը քաղաք կշինէ և իւր անունով Արմաւիր կանուանէ, իւր երկրորդ որդուն, Հարային նա կրնակեցնէ Արագածից դեպի հիւսիս եղած նահանգում, որից այդ պտղատու երկիրը անուանվեցաւ Շիրակ։ Ի հարկէ, Արմաւիր և Շիրակ անուանների Արամայիսից և Հարայից յառաջանալը բռնի է, բայց մենք աչքից չպիտի թողնենք այն, որ բոլոր աւանդութիւնները մեզ հասած են ոչ թէ ուղղակի հայկական, այլ ասորի ալքիւններից, որտեղ փոփոխութեան են ենթարկված։ Արմաւիրը յայտնի էր նաև Պաղոմէոսին Արմաւիրէ ձևով, Գալով Շիրակին, նահանգն այս անունը ստացել է Շիրակներից, ժողովրդից, որոնք Պաղոմէոսի, Ստրաբոնի և Ցակիտոսի Խօսքով, կապրէին հիւսիսային Կովկասում և յաճախ արշաւանք կանէին Հայաստանում, որտեղ նոցա մի մասը երկի մնացած է առրելու Շիրակ անունը վրացի վերջաւորութեամբ (Ցորագեալ) պահպանված է մինչև մեր ժամանակը, թիւրբական հողերում Արուաչայ և Արփաչայ գետերի մէջ, ուր և կդառնվէր հին Շիրակը։

Սակայն Հայաստանի զլիասոր գետը, որ կանցնէր առհմական նա հանդի մէջով և որի ափին շինված էր արգէն Արմաւիր քաղաքը, զիս ևս առանձին անուն չունէր: Նա պիտի սպասէր Արամայիսի 15) Արաստթռոք ծնվելուն: որ կարօղանար իւր Երասի անունը ստանալ: Մենք գիտենք, որ Յոյները այս գետը Արաքս կանուանէին: և մեր կարծիքով այս ձեզ աւելի հին է քան մէկ հայկական Երասի ձեզ:

Հայերը, իւրեանց լեզուի կանոնների համաձայն: փախ առնված բառերի մէջ սովորաբար կոկորդպային տառից առաջ սուլիչ տառ կդնեն: փոխանակ կոկորդպային տառը սուլիչից առաջացնելու: Այսպէս պարսկերէն բահչ: զենդիրէն բակչ: վակչ (գերմաներէն Wachsen), khshi, khshathra, մտնելով հայերէն լեզուի մէջ կդառնայ բաշխ վաշխ, իշխել: աշխարհ եկն: Ըստ ամենայն հաւանականութեան, Հայերը գտան Արաքս անունը նորա ափերի վերս բնակելու միջոցին և փոխած են այն, իւրեանց լեզուի ոգու համաձայն: Արացերէն բակչի ձեզ նոյնպէս մեր կարծիքը կհաստատէ: Գալով Արաստ անունին: նա ոչ մի կերպով չէ կարող Արաքսի վիզանուն լինել: Քանի որ վերջը տատմային տառը ունի Եթէ այս անունը աւանդութիւնների մէջ որև իցէ նշանակութիւն ունէր, այդ կարօղ էր վերաբերվել միայն այն անունին, որ տուած են Հայերին յետագայ Ասորեստանցիները պարսկական արձանագրութիւնների մէջ: Նոքա Հայերին Ուրաստու կանուանեն հին Ուրարտու անունի փոխանակ, բայց որովհետեւ հին յիշատակարաններում Արարտու ձեւ ևս կապատահի: յետագայ արձանների մէջ ևս կար համապատասխանող Արաստու ձեզ, որ մօտ է Արաստ<sup>14)</sup> անունին: Այնուշետեւ շուտով Արամայիս կմեռնի: տալով իւր իշխանութիւնը իւր 12) Ամասիա անդրանիկ որդուն:

Ամասիան ունէր չորս որդի: Արաստ, Գեղամ, Փառոխ և Ցոլակ: Արաստ: իւր գործը կատարելով, այսինքն Արաքսին անունը տալով կանչետանոյ աւանդութենից: Իւր հօրը կյաջորդէ Գեղամ: Սորա մասին ներքեւ պիտի խօսվի: Գալով 15) Փառոխին և 17) Ցոլակին, նոցա անուները ստեղծված են երկու քաղաքի կամ երկու զիւղի: Փառախոտ և Ցոլակերտ անուններ բացատրելու համար, որոնք Մեծ Արարատի ստորոտներում կդժնվին: Բայց այս երկու անունները, ըստ ամենայն հաւանականութեան, յետոյ կցված են Արմենակի սերունդին: որովհետեւ Աերէոսի մէջ պահած (եր. 9) աւանդութեան ուրիշ խմբագրութեան նոյնելով, դործը մի փոքր ուրիշ կերպով է եղած: Գամասկոսից: կասէ նաև փախաւ Արրահամի աղախին Մարսեակ և բնակեց Այրարատեան հովիտում: Այստեղ ծնաւ ելեք որդի: որոնցից անդրանիկն Փառոխ կանուանէին: Նորանից

14) Kiepert, Monatsber. 1869. թ. 226: Խակ Շպիգելին (Eränische Alterthumskinde, I. s. 733) այս անունը կյեծեցէ Արաստ: Հօր maidhyōmāo Զըուաւորի առասպեսիառն պատմութենից:

Նաև տեղը իւր անունը ստացաւ Փարախոտ։ Այստեղում բնադիրը վկասված է և նորա մեացորդ որդիների անունները բաց են թողված։

Ամասիան ոչինչ արժանայիշատակ գործ չէ արած, բացի նորանից, որ նա իւր անունով սարը Մասկ անուանեց, թէկ մեծ նմանութիւն այստեղ ևս չենք գտնում։ Սերէոսի մէջ (Նոյնաել) ուրիշ տեսակ կիսօսվի, այսինքն թէ Ա. Հ. սարը իւր Մասկ անունը ստացած է մինչեղ վերցիշված Մարսիակից։ Այս երկու նմանութիւններն արժեն մին միւսին։

Պէտքէ նկատել, որ Հայերը Մասիս բառը յոգնակի կհօլովին, թէև անհասկանալի է, թէ ինչի միայնակ զագաթը կարող է իւր մէջ բազմութեան գաղափար բավանդակել։ Դարս անունն ևս յոգնակի կհօլովին, որովհետեւ \* տառը Հայերի մէջ յոգնականացուցիչ է։ Դնենք թէ Հայաստանի սահմաններում գտնված տեղերի անունների մէջ, բառի վերջ \* տառ լինելով՝ լեզուի յատկութեան համաձայն կարող էր ստիպել յոգնակի հօլովելու բառերը։ Բայց հայկական մատենադիրների ակներև սիսալն այն է, որ նոքա յոգնակի թուով կհօլովին նաև օտարական քաղաքների անուններն են, որոնք \* տառով կվերջանան։ օրինակ Թէֆէւ և Պէտք վերջաւորված քաղաքները, օրինակ Թէոդոսիոպոլիս են։

(Վ. Ե. Ջ. Թէ- անդամ) . .

Ա. Տ. Գ.

### ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Արարատ, 1880, յունիս)։

Դպրոցական կեանքի առանձնապես յատուկ երեցյմն է լաւագոյն աշակերտների հսկողական կարգը։ Արդէն ասացինք թէ աշակերտները վայելումն լիովին ազատութիւն, բոյց անդիհացիների կարծիքով, խոչեմարար օգուտ են քաղում այս ազատութենից միայն այն մանուկները, որոնք դպրոցի մէջ անցուցել են մի երկու տարի։ Դպրոցներում չկան ոչինչ վերակացուներ, ուստի և բարձր գասարանների լաւագոյն աշակերտները, մօնիտօրներ, պարտաւոր են հսկել որ դպրոցի կարգն ու կանոնը ճշգիւ կատարեն փոքրիկ աշակերտները։ Նոքա պարտաւոր են նայել փոքրներին, որ չծխեն, աղաղակ շշանեն, փողոցները քար չձգեն, դինեատուն չմտնեն, չծեծեն իւրեանց թոյլ ընկերներին, մի խօսքով ու մի կերպով չքանդեն դպրոցական կանոնները։ Այս կարգն աւելի վատ կողմեր ունի քան թէ լան։ Փոքրներին նայալ, շատ անգամ և խստիւ պատժելու իրաւունք ունեցող, իսկ քանի մի ուսումնարաններում մինչև իսկ մարմաւոր պատիք տուող, երիտասարդը յափշտակվում յաճախ իւր պարտաւորութեամբ և խանգարում իւր բնաւորութիւնը։ Նորա մէջ զարգանումէ սնապարհութիւն, բիբու բնաւորութիւն, պաշտօնական, իշխողական վարմունք և սէրդէսի բռնաւորութիւն։ Տասն և վեց, տասն և եօթն տարեկան երիտասարանները շատ հազի։ Են ունենում ողջմտութիւն և փորձառութիւն, ո-